ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ДАВИД АХВЕРДЯН

МЕЖДУНАРОДНАЯ ФИНАСОВАЯ СИСТЕМА: ОДНОПОЛЯРНЫЙ ИЛИ МНОГОПОЛЯРНЫЙ МИР?

Ключевые слова: *международная финансовая система, вторичный эффект, валютный курс, резервная валюта*

Существуют ряд каналов циклической взаимозависимости, главный из которых действует через все более глобальные, огромные и сложные финансовые рынки. Различные недостатки существующей международной (не)системы по сути отображают дисбалансы. Кризисы будут повторяться вновь и вновь, пока не исправлены эти недостатки. Специалисты, которые полагают, что роль вторичных влияний на развивающиеся страны может быть существенной, в зависимости от событий, происходящих в развитых странах, предлагают ряд способов по самозащите, которые представлены в данной статье.

DAVIT HAKHVERDYAN

INTERNATIONAL FINANCIAL SYSTEM: UNIPOLAR OR MULTIPOLAR WORLD?

Key words: *International Financial System, Secondary Effect, Exchange Rate, Reserve Currency*

There are number of channels of cyclical interdependence, the main of which operates through even more global, huge and complex financial markets. The various disadvantages of the existing international system in fact reflect imbalances. Crises will be repeated again and again, until these disadvantages are corrected. Experts who believe that the role of secondary influences on developing countries can be significant, depending on the events taking place in developed countries, they offer a number of ways to protect themselves, which are presented in this article.

ՌՈԲԵՐՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ասպիրանտ, ՀՊՏՀ

ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԻՔ

Հիմնաբառեր. *տնտեսական դիվանագիտություն, կայուն զարգացում, գլոբալացում, տարածաշրջայնացում, բարեփոխում, տնտեսության բացություն, հովանավորչություն, մրցունակություն*

Տնտեսական դիվանգիտությունը պետության կարևորագույն գործառույթներից մեկն է, որը ժամանակակից պայմաններում ձեռք է բերել համալիր, համակարգային բնույթ: Ժամանակակից տնտեսական դիվանագիտության հիմնական նպատակը միջազ-

գային տնտեսական հարաբերությունների ոլորտում ազգային շահերի ապահովումն է, ազգային տնտեսությունների աճող բացության պայմաններում երկրի մրցունակության և անվտանգության ամրապնդումը՝ ուղղված արտաքին սպառնալիքների կանխմանը կամ հաղթահարմանը, հավասարակշռված և կայուն զարգացմանը: Տնտեսական դիվանագիտության արդյունավետության բարելավմանը նպաստում են հետևողականորեն իրականացվող մրցունակության ամրապնդման քաղաքականությունը, ազգային արտաքին առևտրային ռազմավարությունը, տնտեսական դիվանագիտության գերակայությունների պատշաճ սահմանումը, ֆինանսական, կազմակերպչական և կադրային ապահովումը:

Տնտեսական դիվանգիտությունը, որպես պետության կարևորագույն գործառույթներից մեկը, ժամանակակից պայմաններում ձեռք է բերել համալիր, համակարգային բնույթ և հիմնվում է պետության, հասարակական կազմակերպությունների և գործարար շրջանակների հետ սերտ համագործակցության վրա: Միջազգային տնտեսական հարաբերությունների կատարելագործման առաջնային գործոնը գլոբալացումն է, որը որոշիչ ազդեցություն ունի ժամանակակից տնտեսական դիվանագիտության զարգացման վրա և որի հիմնական նպատակը միջազգային տնտեսական հարաբերությունների ոլորտում ազգային շահերի ապահովումն է, ազգային տնտեսությունների աճող բացության պայմաններում երկրի մրցունակության և անվտանգության ամրապնդումը՝ ուղղված արտաքին սպառնալիքների կանխմանը կամ հաղթահարմանը, հավասարակշռված և կայուն զարգացմանը: Տնտեսական դիվանագիտության արդյունավետության բարելավմանը նպաստում են մի շարք գործոններ, սակայն դրանցից առանցքայինը զարգացած և նոր արդյունաբերական երկրների կողմից հետևողականորեն իրականացվող մրցունակության ամրապնդման քաղաքականությունն է, որը հենց հաջողված տնտեսական դիվանագիտության նյութական հիմքն է:

Ի թիվս այլ կարևոր գործոնների, կարելի է նշել ազգային արտաքին առևտրային ռազմավարությունը, տնտեսական դիվանագիտության գերակայությունների պատշաճ սահմանումը, ֆինանսական, կազմակերպչական և կադրային ապահովումը:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև բազմակողմ տնտեսական համագործակցության բարեփոխումների ինստիտուտների և մեխանիզմների վրա՝ դրանց արդյունավետության բարձրացման և ժամանակակից իրողություններին ավելի համապատասխանեցման նկատառումներով:

Բազմակողմ տնտեսական դիվանագիտության մեջ նոր երևույթներ են երկրների ներկայացուցչությունների մեծացումը, բազմակողմ կազմակերպությունների շրջանակներում ավանդական քննարկվող հարցերի ընդլայնումը, դրանց գործունեության աճող թափանցիկությունը և հրապարակայնությունը, դրանց միջև փոխազդեցության ուժգնացումը՝ ընդունված որոշումների օրինականության աստիճանի բարձրացման, համատեղ խոշորածավալ նախաձեռնությունների իրականացման նպատակով:

Գործնականում տեղ է գտել նաև առանձին երկրների և պետությունների դիրքորոշումների միջև հակասությունների սրման միտումը, որը դրսևորվում է խմբային դիվանագիտության հիման վրա՝ հատկապես զարգացող երկրների կողմից (որը ակնհայտ ցուցա-

դրվեց ԱՀԿ Դոհայի ռաունդում): Դա նվազեցնում է բազմակողմ տնտեսական դիվանագիտության արդյունավետությունը: Բացասական ազդեցություն են թողնում գերակա հիմնախնդիրների գնահատման և դրանց լուծմանն ուղղված մոտեցումների տարբերությունները, ինչպես նաև առանձնահատուկ՝ վարչական և տեխնիկական բնույթի (մի շարք երկրների ներկայացուցիչների ոչ բավարար մասնակցությունը աշխատանքային խմբերի գործունեությանը և որոշումների ընդունմանը) հիմնախնդիրների ծագումը:

Միջազգային տնտեսական հարաբերությունների ժամանակակից համակարգում տնտեսական դիվանագիտության դերի աճին նպաստել են բազմաթիվ գործոններ, ամենից առաջ՝ համաշխարհային տնտեսական համակարգի միջազգայնացման և փոխկախվածության ուժգնացման գործընթացները, որոնք ընթացել են երկու հարթությունում՝ համաշխարհային և տարածաշրջանային ինտեգրման, ընդ որում, որոշ երկրներ մի քանի տարածաշրջանային խմբավորումների մասնակիցներ են: Օրինակ՝ Միացյալ Նահանգները, Կանադան, Մեքսիկան անդամակցում են ինչպես Ասիա-Խաղաղօվկիանոսյան տնտեսական համագործակցությանը (APEC), այնպես էլ Հյուսիսամերիկյան ազատ առևտրի ընկերակցության անդամ են (NAFTA), իսկ վերազգային կազմակերպությունների մեծ մասը գոյություն ունեցող բոլոր տարածաշրջանային խմբավորումներում ակտիվ գործունեություն է իրականացնում:

Երկրորդ գործոնը, որը նպաստել է տնտեսական դիվանագիտության դերի աճին, համաշխարհային տնտեսական համակարգի նոր որակներն են շուկայական տնտեսության տարածքի նշանակալից ընդլայնումը, ազգային տնտեսությունների ազատականացումը և դրանց փոխազդեցությունը առևտրի և միջազգային ներդրումների միջոցով: Համաշխարհային տնտեսության ավելի մեծ թվով սուբյեկտներ՝ ՎԱԿ-եր, բանկեր, ներդրումային խմբեր, լուրջ ազդեցություն են թողնում համաշխարհային քաղաքականության, միջազգային հարաբերությունների վրա:

Համաշխարհային տնտեսությունը դարձել է այնքան փոխկապակցված և փոխպայմանավորված, որ բոլոր ակտիվ մասնակիցների շահերը պահանջում են կայունության պահպանում ոչ միայն տնտեսական, այլև ռազմական և քաղաքական ոլորտներում:

Երրորդ՝ գլոբալացումը տնտեսական դիվանագիտության դերը բարձրացրել է քանակական և որակական նոր մակարդակի: Համաշխարհային շուկայից, ներդրումներից, տեխնոլոգիաներից առանձին տնտեսությունների, օրինակ՝ Չինաստանի, մի շարք նոր անկախ պետությունների ծավալային և աճող կախվածությունը դրանց ստիպում են հարմարեցնել իրենց դիրքերը միջազգային կյանքի քաղաքական և ռազմական հիմնախնդիրներին:

Տնտեսական դիվանագիտության դերի բարձրացման հիմքում նաև միջազգային տնտեսական հարաբերությունների ժամանակակից համակարգում տեղի ունեցող հիմնարար փոփոխություններն են՝

1) Համաշխարհային տնտեսության մեջ ներգրավվում են նախկինում աշխատանքի միջազգային բաժանմանը ավելի քիչ մասնակցություն ունեցող երկրներ և տարածքներ: Օրինակ՝ Հարավային Կորեան և Թայվանը ներկայումս արտադրության և առևտրի խո-

շոր կենտրոններ են, համաշխարհային տնտեսությանը ակտիվորեն ինտեգրվում են ԱՊՀ երկրները:

2) Մեծանում է տարբեր տարածաշրջաններում արտադրված ապրանքների և ծառայությունների բազմազանությունը, գիտատեխնիկական առաջընթացն ընդլայնում է բնական ռեսուրսների (նավթ) օգտագործման ոլորտները, հանգեցնում է համաշխարհային առևտրի ոլորտ թափանցող արտադրության էլ ավելի նոր ճյուղերի ստեղծմանը:

3) Աճում է արդյունաբերական զարգացած երկրների թիվը, որի արդյունքում ամբողջ աշխարհում արտադրված ապրանքների և ծառայությունների սպառումը դառնում է սովորական: Սովորական են դառնում արտասահմանյան զբոսաշրջությունը, այլ երկրներում կատարվող աշխատանքը, կրթություն և բուժում ստանալը, տեխնիկապես ավելի բարդ տրանսպորտի միջոցների, հեռահաղորդակցության, ֆինանսական հաշվարկների օգտագործումը:

Համաշխարհային ֆինանսական ենթակառուցվածքների (բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների, արժեթղթերի և արժույթների) ձևավորումը ստեղծում է հսկայածավալ կապիտալի տեղաշարժի մեծ հնարավորություն: ՎԱԿ-երի աճը ավելի է ուժեղացնում այդ գործընթացների նշանակությունը, իսկ օտարերկրյա ներդրումներն իրենց հետ տանում են արտադրության և ձեռնարկությունների կառավարման նոր եղանակներ, նոր տեխնոլոգիաներ:

5) Տնտեսավարման շուկայական մեթոդները տարածվում են լայնորեն, այն դեպքում, երբ ոչ շուկայական տնտեսության տարածքը նեղանում է: Դա նվազեցնում է վերջինիս բնորոշ՝ փակ լինելու և ինքնապահովման, ինքնաբավության միտումը: Տնտեսության արտաքին բացությունը դառնում է նորմ:

Ազգային տնտեսությունների բացությունը մեծանում է միջազգային տնտեսական հարաբերությունների ազատականացման, ապրանքների, կապիտալի, աշխատուժի և տեխնոլոգիաների ազատ տեղաշարժի ընդլայնման շնորհիվ: Միաժամանակ, հովանավորչությունը, որը դրսևորվում է բազմաթիվ ձևերով, միջազգային տնտեսական հարաբերությունների ոլորտից չի անհայտացել, սակայն դրա գործողության սահմանները աստիճանաբար նեղանում են:

Միջպետական տարածաշրջանային ինտեգրումը մասնավորապես՝ Եվրոպայում, երկրների համագործակցությունը հանգեցնում է միասնական տնտեսական տարածքի ձևավորմանը, ազգային տնտեսությունների միջև ընդլայնում է մասնագիտացման և կոոպերացման շրջանակները: Օրինակ՝ Ֆրանսիայի, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի և այլ երկրների ընկերությունները համագործակցում են ժամանակակից քաղաքացիական օդանավերի արտադրության ոլորտում:

Դրա հետ մեկտեղ, մի շարք երկրների և տարածաշրջանների տնտեսական դիվանագիտության զարգացման գործում առկա են որոշակի հիմնախնդիրներ, որոնց թվում են՝

- Արդյունաբերական և հետամնաց երկրների տնտեսական զարգացման մակարդակների միջև խզումը: Հետամնաց երկրների տնտեսությունները մեծ չափերով

կախված են գյուղատնտեսական մեկ կամ երկու արտադրանքի (միամշակութային) կամ հումքային ապրանքների արտահանումից: Այդ երկրները ընդունակ են ներկայացնելու միայն ներմուծման սահմանափակ պահանջարկ:

- Տնտեսությունների բացության միտումը զուգակցվում է պետությունների կողմից կիրառվող տարբեր տեսակի խոչընդոտների և սահմանափակումների պահպանումով, իսկ մի շատ դեպքերում՝ ավելացումով: Աղքատ երկրներում նման խոչընդոտներն արդարացված կամ նույնիսկ անխուսափելի են, քանի որ առանց ազգային արդյունաբերության պաշտպանության՝ ժամանակակից տնտեսությունը զարգանալ չի կարող:
- Տնտեսական դիվանագիտության վրա չափազանց բացասական ազդեցություն ունեն տնտեսական և ֆինանսական ճգնաժամերը: Այսպես՝ 1997–1998 թթ. ֆինանսական ճգնաժամը Արևելյան և Հարավարևելյան Ասիայի երկրներում դարձավ ներմուծման և ներդրումների ներհոսքի կտրուկ անկման պատճառ:

Ամբողջությամբ, XXI դարի սկզբին ձևավորված համաշխարհային իրողությունները հանգեցրել են տնտեսական դիվանագիտություն զգալի փոփոխությունների, այդ թվում ՝

- Ընդլայնվում է տնտեսական դիվանագիտության օբյեկտների դաշտը: Բացի առևտրից, ներդրումներից, հարկերից, տնտեսական դիվանագիտության օբյեկտ են դարձել տնտեսական աջակցությունը, աշխատուժի միգրացիան, մրցակցությունը և այլն:
- Ընդլայնվում է տնտեսական դիվանագիտության սուբյեկտների շրջանակը: Պրոֆեսիոնալ դիվանագիտական ծառայությանը վերագրված դիրքերին զուգահեռ, տնտեսական դիվանագիտությանը սկսում են մասնակցել նաև այլ հասարակական միավորումներ, այդ թվում՝ մասնավոր բիզնեսը: Ճշգրտվում են նաև արտերկրում ազգային բիզնեսին աջակցելու կանոնները:
- Գլոբալացումը տնտեսական դիվանագիտության համար ձևավորում է նոր ոլոտներ և խնդիրներ, ինչի արդյունքում այն դադարում է լինել զուտ միջպետական գործունեություն:
- Բարդանում են ազգային տնտեսությունների հետ կապված ինստիտուցիոնալացման գործառույթները. առաջանում է միջազգային իրավական նորմերի ճշգրիտ ընկալման անհրաժեշտություն՝ ազգային շահերի ու անվտանգության ապահովման նկատառումներով:
- Տնտեսական դիվանագիտության մեջ ի հայտ են գալիս էներգետիկ, բնապահպանական, պարենային բնույթի ճյուղային տատանումներ, որոնք ունեն գլոբալ նշանակություն: Օրինակ՝ գլոբալացման պայմաններում մեծ հետաքրքրություն է առաջացնում երկրների վարքագիծը՝ կապված այնպիսի առանցքային հարցի հետ, ինչպիսին է էներգառեսուրսների տնօրինման և դրանց աղբյուրների, մատակարարման ուղիների և միջոցների վերահսկողությունը:

Դիվանագիտական առաքելությունը հյուրընկալ երկրի տնտեսության կառուցվածքի և զարգացման հիմնական միտումների, նրա պլանների և ծրագրերի, արժութաֆինանսա-

կան վիճակի, արտաքին տնտեսական հարաբերությունների զարգացման, ապրանքների և ծառայությունների շուկայի իրադրության, արտահանման և ներմուծման ներուժի մասին տեղեկատվություն ներկայացնելու հիմնական կառուցվածքային միավորն է, տեղեկատվություն, որը հավաքագրվում է առաքելությանը մատչելի, հասանելի պաշտոնական աղբյուրների միջոցով: Այս ամենը թույլ է տալիս ստեղծել հետագա տնտեսական համագործակցության ներուժը:

РОБЕРТ АЙРАПЕТЯН

ДИПЛОМАТИЯ КАК ИНСТРУМЕНТ УРЕГУЛИРОВАНИЯ ВНЕШНЕЭКОНОМИЧЕСКИХ СВЯЗЕЙ СТРАНЫ

Ключевые слова: *экономическая дипломатия, устойчивое развитие, глобализация, регионализация, реформы, открытая экономика, протекционизм, конкурентоспособность*

Экономическая дипломатия - одна из важнейших функций государства, которая в современных условиях приобрела сложный и системный характер. Главная цель современной экономической дипломатии - обеспечение национальных интересов в области международных экономических отношений, укрепление конкурентоспособности и безопасности страны в условиях роста национальной экономики, направленных на предотвращение или преодоление внешних угроз, сбалансированное и устойчивое развитие. Повышению эффективности экономической дипломатии способствуют последовательная реализация политики укрепления конкурентоспособности, национальной внешнеторговой стратегии, корректного определения приоритетов экономической дипломатии, ее адекватного финансового, организационного и кадрового обеспечения.

ROBERT HAYRAPETYAN

DIPLOMACY AS AN INSTRUMENT FOR SETTLING THE FOREIGN ECONOMIC RELATIONS OF THE COUNTRY

Key words: *economic diplomacy, sustainable development, globalization, regionalization, reforms, open economy, protectionism, competitiveness*

Economic diplomacy is one of the most important functions of the state, which under modern conditions has acquired a complex, systemic character. The main goal of modern economic diplomacy is to ensure national interests in the field of international economic relations, to strengthen the country's competitiveness and security in the conditions of growing national economy aimed at preventing or overcoming external threats, balanced and sustainable development. Increasing the effectiveness of economic diplomacy is facilitated by the consistent implementation of the policy of strengthening competitiveness, the national foreign trade strategy, the correct definition of the priorities of economic diplomacy, its adequate financial, organizational and personnel support.